# Անձնական/Սպառողական/ Ավտոմեքենայի Վարկերի և Կրեդիտ քարտերի Տոկոսադրույքներ

HSBC

Ձեր բանկն ամբողջ աշխարհում

## Անվանական տոկոսադրույքներ

| Վարկի տեսակ | Տարեկան տոկոսադրույք |
|---|---|
| Սպառողական | 24% |
| Անձնական սպառողական | 22% |
| Ավտոմեքենայի | Հաշվարկային տոկոսադրույք* գումարած՝ 5.75 - 8.75 |
| Կրեդիտ քարտեր | 21.6 - 24% |

** Գործող հաշվարկային տոկոսադրույքի մասին տեղեկանալու համար այցելեք մեր մասնաճյուղերը/գրասենյակները կամ ինտերնետային կայքը՝* ***www.hsbc.am***

## Տարեկան փաստացի տոկոսադրույք

Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից (գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ): Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A=\sum_{n=1}^{N}\frac{CF_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}=\sum_{n=1}^{N}\left(CF_n\times(1+i)^{-\frac{D_n}{365}}\right)$$

որտեղ՝

- ***i*** տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի վարկավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, որն իր մեջ ներառում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում
- ***A*** սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարը
- ***n*** սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված վճարի (վարկի մայր գումար, տոկոսագումար և/կամ այլ վճար՝ ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճար) հերթական համարը
- ***N*** վճարումների քանակը
- ***$CF_n$*** սպառողի կողմից վարկի ստացման պահին և/կամ վարկի գործողության ընթացքում կատարված

հերթական` n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և/կամ այլ վճարումների գումարներ)

$D_n$ այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական` n-րդ մարման օրը ներառյալ:

## Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակներ

### Սպառողական Վարկի պայմաններ

*(հաստատուն անվանական տոկոսադրույք)*`

- Տրամադրվող գումար` 1,500,000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք` 24% հաշվարկված վարկի մնացորդի վրա
- Մարման ժամկետ` 24 ամիս, կամ 730 օր
- Մարումներ` ամենամսյա անհավասարաչափ մարումներ (մայր գումար` հաշվարկված հավասար ամսական մարումներով և տոկոսներ` հաշվարկված վարկի մնացորդի վրա)
- Բանկային հաշվի սպասարկման միանվագ վճար վարկի ստացման պահին` 3,000 ՀՀ դրամ

Տարեկան փաստացի տոկոսադրույք` 27.52%

### Ավտոմեքենայի Վարկի պայմաններ

*(փոփոխական անվանական տոկոսադրույք)*`

- Տրամադրվող գումար` 5,000,000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք` Բանկի հաշվարկային տոկոսադրույք* + հաստատուն տոկոսային մարժա (%), օրինակ` 9.25% + 5.75 %` հաշվարկված վարկի մնացորդի վրա
- Մարման ժամկետ` 48 ամիս, կամ 1460 օր
- Մարումներ` ամսական անհավասարաչափ մարումներ (մայր գումար` հաշվարկված հավասար ամսական մարումներով և տոկոսներ` հաշվարկված վարկի մնացորդի վրա)
- Բանկային հաշվի սպասարկման տարեկան վճար** 60,000 ՀՀ դրամ

Տարեկան փաստացի տոկոսադրույք` 18.76%

** Հաշվարկային տոկոսադրույքի փոփոխությունից կախված՝ կարող է փոխվել ինչպես սահմանված անվանական տոկոսադրույքը, այնպես էլ հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքը:*

*** Բանկային հաշվի տարեկան սպասարկման առաջին վճարը կատարվում է վարկի տրամադրման օրը:*

## Կրեդիտ քարտի պայմաններ

- Տրամադրվող վարկային սահմանաչափ՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք՝ սահմանված ամսական տոկոսադրույք (2%) x 12 = 24%
- Մարման ժամկետ՝ 12 ամիս, կամ 365 օր
- Մարումներ՝ առնվազն ամիսը մեկ անգամ վարկային սահմանաչափի օգտագործված մասի՝ (ներառյալ հաշվեգրված տոկոսները*) նվազագույնը 10%-ի չափով՝ նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ:
- Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար՝ 1,000 ՀՀ դրամ

**Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 29.02%**

** Տոկոսները հաշվեգրվում են վարկային սահմանաչափի օգտագործված մասն առաջին վճարման հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ չմարելու դեպքում, երկրորդ ամսվանից սկսած մինչև կատարված ծախսերի լրիվ մարումը՝ տոկոսը կիրառվելով դրա սկզբնական գումարի վրա՝ այդ ծախսերի գոյացման պահից:*

*Նշում. Վարկային սահմանաչափի սահմաններում կանխիկացում կատարելու պարագայում տոկոսները հաշվեգրվում են գործարքի կատարման պահից:*